# ՄԵՂՐԻ ԵՎ ՄԵՂՐԱՄՈՄԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԲԺԻՇԿՆԵՐ ԲՈՒՆԻԱԹ ՍԵԲԱՍՏԱՑՈՒ ԵՎ ԱՍԱՐ ՍԵԲԱՍՏԱՑՈՒ ԴԵՂԱՏՈՄՍԵՐՈՒՄ (XIV—XVII ԴԱՐԵՐ)

Ա. Օ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

*Մ. Մաշտոցի անվան Հնագույն ձեռագրերի ինստիտուտ—Մատենադարան, Երևան*

*բառ XIV—XVII դարերի հայ բժշկարանների Բունիաթ Սեբաստացու դեղատոմսերը*

*Հին և միջնադարյան հայ ժողովրդական բժշկության մեջ որպես դեղամիջոց երբեմն առանձին, երբեմն էլ ուրիշ նյութերի հետ, իբրև դեղատոմսերի բաղադրիչ մաս, օգտագործվել է նաև մարդու փոքրիկ բարեկամի՝ մեղվի արտադրանքը՝ մեղրն ու մեղրամոմը, հաճախ էլ մեղվաթույնն ու մեղրաջուրը: Ինչպես վկայում են գրիչներն ու ժողովրդական բժիշկները, այն միշտ էլ բարելավել է հիվանդի վիճակը: «Դեռևս վաղ միջնադարում Փոքր Հայքի Սեբաստիա մայրաքաղաքը,— ինչպես գրում է Դանարա Կարապետյանը,— եղել է հայ գրչության կենտրոններից մեկը, որտեղ գրվել և ընդօրինակվել են բազում ձեռագրեր» [1, էջ 7]: XI դարում Սեբաստիայում Գրիգոր Ակոռեցին գրել է Ավետարաններ, Ասար Սեբաստացին՝ «Գիրք բժշկութեան արհեստի», Բունիաթ Սեբաստացին՝ «Գիրք բժշկութեան տումարի» և այլն: Վերջին երկու բժշկարանները դասվում են հայ բժշկության մեծագույն արժեքների շարքը: Բունիաթ Սեբաստացին ապրել ու ստեղծագործել է մոտավորապես 1575—1650 թթ., նրա ծննդյան ու մահվան ստույգ թվականները հայտնի չեն:*

*Բունիաթ Սեբաստացու մասին առաջին գրավոր տեղեկությանը հանդիպում ենք «Բազմավեպում», ուր նա հիանալի բնութագրում է բժշկին: Սեբաստացին նշում է, թե ինչպիսին պետք է լինի բժիշկը՝ բարեխիղճ ու պարտաճանաչ, պետք է ճանաչի հիվանդություն առաջացնող պատճառները, լինի խելոք, լավ իմանա բոլոր դեղերի զորությունը: Հիվանդի իսկական ցավը հասկանալու դեպքում միայն դեղ նշանակի [2, էջ 215]:*

*Բունիաթ Սեբաստացին իր «Գիրք բժշկութեան տումարի» բժշկարանը գրելիս ուղենիշ է ունեցել միջնադարյան հայ խոշորագույն բժշկապետեր՝ Մխիթար Հերացու, Գրիգորիսի, Ամիրդովլաթ Ամասիացու աշխատությունները, որոնց քաջածանոթ է եղել: Իր աշխատության մեջ նա խոսում է բոլոր ախտաբանական շեղումների մասին, մանրամասն կանգ է առնում հատկապես ներքին հիվանդությունների՝ մահճարուժական պատկերների, հիվանդության ելքի կանխագուշակման, ապաքինման և խնամքի հարցերին: Խոսում է հիվանդությունը առաջացնող պատճառների մասին: Շատ կարևոր է Բունիաթ Սեբաստացու այն տեսակետը, թե հիվանդի որևէ օրգանի ախտաբանական փոփոխությունները կարող են ազդել հարևան օրգանների վրա ևս: Ըստ Բունիաթ Սեբաստացու՝ մարմնի այտուցվածությունը, ջրգողությունը առաջանում են, երբ հիվանդանում են լյարդը, ստամոքսը, փայծաղը: Նա նկատում*

է, որ «Հիվանդ լյարդի ուժը չի պատի կերակրահյութը դարձնել արյուն» [3, էջ 78 բ]։ Կամ՝ նա այն ճիշտ տեսակետին է, որ գլխի և դեմքի հիվանդությունների պատճառով կարող է վնասվել դիմային նյարդն ու ծռվել այդ նույն կողմի աչքը կամ շրթունքը [3, էջ 63 բ]։

Բունիաթ Սեբաստացին իր բժշկարանի հիսուն գլուխներից 15-ը նվիրել է նյարդային համակարգի զանազան ախտահարումներին և դրանց բուժմանը։ Նա հատուկ ուշադրություն է դարձրել հիվանդից շատ արյուն բաց թողնելու բուժամիջոցի վրա։ Նա նշում է, թե ինչքան շուտ և շատ արյուն հեռացվի հիվանդի մարմնից, այնքան շուտ այն կառողջանա [3, էջ 69 ա]։ Փորձառու բժիշկը օգտվել է հիվանդին աչքով զննելու, ձեռքով շոշափելու, ականջով լսելու մեթոդներից՝ հատուկ ուշադրություն դարձնելով հիվանդի մաշկի գույնին, շնչառությանը, այտուցվածությանը, հիվանդի խորխի, մեզի, թարախի գոյության, կղանքի գույնի, հոտի և այլ հատկությունների, որոնք մինչև այժմ էլ կիրառվում են գիտական բժշկության մեջ։

Բազմապիսի հիվանդություններ բուժելիս՝ Բունիաթ Սեբաստացին իր դեղատոմսերում զանազան նյութերի հետ օգտագործել է մեղրը, մոմը, մեղրաջուրը։ Բերենք նման դեղատոմսերից մի քանիսը։

«Անզգայության (մարդու մարմնի որևէ մասի, ջղերի, բազկի, ոտքերի), թուլության և ցավերի ժամանակ նա հանձնարարում է (եթե միաժամանակ մեջքը, վիզը նրանց հետ հոդերը վատ ուժ են և թույլ) տվյալ մասերին քսել գաստի ձեթ (կապարաս բույսի ձեթ), հապի մենթե (դեղախառնուրդ)։ Խմելու տալ ամեն օր 10 գրամ վարդի մուրաբա՝ տաք ջրով բացված, հետո՝ այեարիճ (դեղամիջոցների շիլա), ապա օծել մեղրով, հետո տալ մաստաքե (ծառի խեժ), վերջում էլ ծամել տալ չամիչ» [1, էջ 72]։ Մեկ այլ դեղատոմսում ասում է՝ «նման դեպքերում հաբենա արա, տուր մաստակի և մեղրի խառնուրդ (թրիաք), վերջում էլ՝ շլանբրածին (պղպեղիկ) հաբը», [1, էջ 72]։

Աչքերի ցավերի, վատատեսության դեպքում նույնպես դեղատոմսեր է նշում։ Եթե ծերության պատճառով աչքը լավ չի տեսնում՝ հում մեղրը և սև այծի լեղին 3 օր աչքին դնել [1, էջ 77]։ Երբ աչքը արնակալած է և ծակծկում է, առաջարկում է դնել հում մեղր [1, էջ 77]։ Աչքի տեսողությունը լավացնելու համար առաջարկում է կարմիր լեղին հում մեղրի հետ դնել աչքին [1, էջ 77]։ Աչքի վատատեսությունը անցկացնելու համար առաջարկում է մեկ այլ դեղատոմս՝ «պարոսի (մաղադանոս) ջուրը մեղրով, ծիծառի լեղին մեղրով, բազի լեղին մեղրով դիր աչքին» [1, էջ 77]։

Բունիաթ Սեբաստացին դեղ է առաջարկում նաև ականջացավի համար։ Եթե ականջացավի պատճառով այն ուռած է, ականջի ուռած մասի վրա դնել մեղրով եփած ադամնու ծերա [1, էջ 78]։ Իսկ երբ ականջից արյուն է գալիս, առաջարկում է՝ «զզթորը մանր աղալ, քացախով խառնել և կաթեցնել ականջի մեջ, հետո էլ 3 անգամ կաթեցնել եռացրած մեղրաջուր» [1, էջ 79]։ Այս դեղատոմսերը բազմիցս փորձել ենք, դրանք տվել են լավ արդյունք։ Սեբաստացին մեղրի համամասնությամբ դեղատոմսեր ունի նաև քթի ցավերի, քթի միջի մսի հեռացման, փակ քիթը բացելու համար։ Այս դեպքում նա առաջարկում է՝ «սոս սմպուլ, զարանֆիլ, մ. մ. (տաս-տաս) դրամ աղալ և մաղել և տրորել բռահանի գինով ու կաթեցնել քիթը, ինչպես նաև օծել քիթը, հետո էլ մեղրով պատրույգ դիր քիթը։ Մեկ ժամից հետո փռնկտալ

տուր։ Դրանց շնորհիվ եթե բժում չոր խոց կա ընկնում է։ Հետո էլ սպիտակ մահլամով բուժիր» [1, էջ 79]։

Լուծը բուժելու բաժնում Բունիաթ Սեբաստացին առաջարկում է՝ «եթե լուծը արնախառն ու թարախային է, պետք է աղիքները լվանալ մեղրաջրով մեկ օր և մեկ գիշեր ապա տալ այնարինճի, ֆաղարա ա(մեկ) տրամ, կամ ջղախոտի ջուր» [1, էջ 91]։

Հազը բուժելու համար առաջարկում է՝ «առ կղբու ձու, սալիխայ, մշմշի կուտ, սև և սպիտակ պղպեղ, դարի պղպեղ, դաղձ, զաֆրան, սրմպուլ, հնդի գ. գ(երեք-երեք) տրամ, ճակզի պալայ ա(մեկ) տրամ, մուշք, զրնպատ, մուտ սաֆի և լազուարդ կես, կես տրամ, մուրտ ա(մեկ) տրամ, զամէնն աղա ապա զ(վեց) տրամ մեղր, Ի(քսան) կարմիր շաքար խառնէ և մեղմն եռացո և ապակյա աման ած. աւուրն կես տրամ տաք ջրով տուր, օգտէ Աստուծով» [1, էջ 85]։

Փորացավի դեպքում առաջարկում է՝ «առ մաստաքի, զարաֆիլ, մահմուտիա, զանճաֆիլ, ատրի ֆլֆլ, ճէվզի պաւա, բ. բ(երկու-երկու) տրամ կարմիր շաքարով տուր որ խմէ։ Ապա հաց և յուղ ուտել տուր մինչև որ լուծել։ Հետո 100 գ բալասմ 300 գ մեղրով մաճուն արա և տուր ժմուն ա(մեկ) տրամ, խիստ լավ է» [1, էջ 94]։

Դեղ է առաջարկում նաև ոսկրացավի ժամանակ՝ «զսամիթն եփեն և ա(մեկ) գդալ մեղրով տուր» [1, էջ 107]։

Բունիաթ Սեբաստացին դեղ է առաջարկում նաև բոթեշի և ծաղիկ հիվանդության դեմ՝ «Թզի չորացած տերևը ծեծէ, մաղե 100 գրամ այս փոշուն խառնե 150 գրամ մեղր և ամեն երեկոյան 10 գրամ կեր ու քնիր։ Հետո էլ թզի ծառի կեղևը եփե ջրով ու խմե» [1, էջ 110—111]։

Դեղ է առաջարկում այրվածքների բուժման համար՝ «կապույտ գդարն ծեծե ու բացախով քսե, ապա ժե(տասնհինգ) տրամ սինամաքի, գ(երեք) տրամ սակամոնի, ե. ե(հինգ-հինգ) տրամ մաստաքի խունկ, ժե(տասնհինգ) տրամ նուշ, ժե(տասնհինգ) տրամ շաքար, դեղերուն չափ գ(երեք) մեղրով մաճուն արա և տուր գ(երեք) տրամ, ե. զ(հինգից վեց) անգամ օրը» [1, էջ 113]։ Նույն նպատակի համար առաջարկում է մեկ այլ դեղ, որը միաժամանակ մաշկային հիվանդությունների համար է՝ «30 գ մաստաքի, 30 գ սինամաքի, 30 գ զոռշուն, 30 գ շաքար և 115 գ մեղր խառնել և օրը 10 գ ուտել»։ Այնուհետև ավելացնում է՝ «երկու օրով մի զադտնի տեղ նստի ու տես թե քնէ ինչ կելնէ» [1, էջ 114]։ Երբ մարմնի որևէ մասը կարմրում է, կաշին է տալիս, խոց է առաջանում, թեփ է դուրս գալիս, Բունիաթ Սեբաստացին առաջարկում է՝ «սկզբից արյուն թողնել, սապոնով լվանալ, ապա ճնճղու սև ծերտը քացախով տրորել վրան քսել։ Հետո շան մեզով լվանալ, ապա առ թրփուլ, զարիղոն, հալպնիլ ա. ա(մեկ-մեկ) տրամ, շահմի հանզալ կէս տրամ աղա և մաղէ և մեղրով շաղվէ և տուր առավոտուն» [1, էջ 115—116]։

Կոտրվածքի, տեղից դուրս ընկնելու և միսը ճզմվելու դեպքում առաջարկում է՝ «նախ արյուն թողնել, տեղը դցել, եթե դուրս է ելել, ապա մեկ գրամ աֆիոն, 3 գրամ մոմ, 6 գրամ հասամ ձեթ, բոլորը խառնել ու հալել, քսել ցավոտ ու վնասված տեղերին» [1, էջ 116—117]։ Եթե մարմնի որևէ մասի մաշկը սևացել, ճաքճքել ու դեղին ջուր է դուրս գալիս, Բունիաթ Սեբաստացին առաջարկում է նախ ամեն առավոտյան տաք ջրով լվանալ, բիթը կաթեցնել մանուշակի և դդմի ձեթեր։ «Մոմը վարդի եղով հալել, բիթրա, հաւու եղ համանգու միավորել և քսե բիթն օգնե» [1, էջ 119]։ Սնկային հիվանդությունը և թութքը բուժելու միջոց է՝ «կարագ կամ յուղ, վարդի յուղ, քաֆար, սպիտակ մոմ խառնի և գիր անկան վրա, և ցավը և արյունը կկտրվի» [1, էջ 127]։

*Բունիաթ Սեբաստացին դեղ է առաջարկում նաև անքնության, վախի, անտարբերության, գլխացավի դեմ։ Նման դեպքերում նա առաջարկում է հիվանդի գլուխը օծել նարգիզի և ռուսամի ձեթերի խառնուրդով, նույն բաղադրությունը կաթեցնել հիվանդի քիթը, ապա խմեցնել մեղրաջուր [1, էջ 62]։*

*Վերը նշված գրքեն բոլոր դեղամիջոցները կյանքում փորձել ենք և ստացել հիանալի արդյունք։*

*Միջնադարյան հայ բժշկության մեջ իր արժանի տեղն ունի XVI—XVII դդ. խաչմերուկներում շուրջ հարյուր տարի ապրած ականավոր բժիշկ Ասար Սեբաստացին, որը մեղրով ու մոմով ոչ միայն շատ օգտավետ ու բուժող դեղորայք է պատրաստել, այլ ինքն անընդմեջ, որպես կանոն, մեղր է օգտագործել։ Նրա ճաշացանկի մեջ իր մշտական տեղն է ունեցել մեղրը, որը նա կերել է ամեն երեկո՝ քնելուց առաջ և հենց դրանով էլ բացատրում է իր հարյուր տարի ապրելու գաղտնիքը։ «Այն տունը, որի սեղանից անպակաս է մեղրը, երբեք ոտք չի դնի բժիշկը»,— գրում է նա։*

*Ասար Սեբաստացին ծնվել է 1565 թ. և ապրել հարյուր տարի. նա իր ժամանակի հայտնի բժիշկ Բարխուդարի որդին էր։ Ասար Սեբաստացին գրել է «Գիրք բժշկական արհեստի մասին» աշխատությունը, որը պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանում 413 համարի տակ։ Գիրքը բաղկացած է երկու մասից՝ հիվանդության պատմությունից և դեղագիտությունից։ Առաջինում ցույց է տրվում, թե բժշկապետերը ինչպես են ուսանում գիտելիքների արվեստը։ Ասար Սեբաստացին սույն գիրքը գրելիս օգտվել է մինչ այդ արդեն հայտնի հայ բժիշկներ Մխիթար Հերացու, Գրիգորիսի, Ամիրդովլաթ Ամասիացու աշխատություններից և ինչպես ինքն է գրում ձեռագրի հիշատակարանում, հավաքել ու իմի է բերել ամենաընտիրն ու պիտանին բժշկության վերաբերյալ. «իսկ այժմ, նուաստս ոգիս Ասար Սեբաստացիս կամեցայ ընտիրսն հաւաքեալ և զհամառոտսն և բացահայտել բստ կարողութեան բժշկական պիտանի բանիւս»։*

*Բերենք Ասար Սեբաստացու օգտագործած զանազան հիվանդությունների բուժման մի քանի դեղատոմսեր, որոնց բաղադրամասերում կա մեղր և մոմ։ Դժվարամիզության, երիկամների, որովայնի և ստամոքսի ցավերի ժամանակ օգտագործել է՝ «Առ զուստ, և սասալիոս և դուցու և ղարփլին, և ասարոն և գիու պառուղ, դ. գ (երեք-երեք) դրամ. աղա և մաղէ և մեղրով մաձուն արա, որպես աստմն է և տուր ի ժման բ (երկու) դրամ կամ գ (երեք) դրամ» (էջ 165)։*

*Դորան ալորիլու պատճառով առաջացած փորի ցավերի ժամանակ առաջարկում է՝ «Առ սև ձուէ փակուր ի վերա, և կամ բնկզի յուր խառնե ի մեղրն և ուտելու տուր և օգտէ» (էջ 168 բ)։ Ջայնը կտրվելու դեպքում՝ «Առ քթանի 173 բ)։ Ջախմածի և բնկածի համար առաջարկում է՝ «մոմեայ խմոր տաք ունդ աղծած և քուքնար աղնձած և կարմիր չամիչ կաթխած և բնտուխ միակայլ և քիմոն և մոմ սև ձոյթ և ղարսըն խառնէ և կապէ ի վերայ» (էջ եղով. և թէ չկենայ եղ և մեղրն խմցո տուր։ Եւ հայց եփէ գինով և ի վերա 177 բ)։*

ԴՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. Բունիաթ Սեբաստացի Գիրք բժշկութեան (ժէ դար). աշխատասիրությամբ Դ. Մ. Կարապետյանի, Երևան, 1987։
2. «Բազմավեպ» N 7, 1849։
3. Մատենադարան, ձեռ. N 10203։
4. Մատենադարան, ձեռ. N 413։


Ստացված է 21. VII. 1989 թ.